к России и его прогрессивные последствия в области экономики и культуры», безусловно восполняет пробел в советской историографии.

Эм. ТЕР-АКОПЯН, М. ИСМАИЛОВ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Միանգամայն ուրախալի է, որ «Տեղեկագրի» խմբագրությունը 1956 թ. № 11-ում տպագրել է հուշեր՝ 1921 թ. դաշնակների կողմից Էջմիածնում բանտարկված ընկերների և Էջմիածնում տեղի ունեցած կռիվների մասին։ Սակայն ընկ. Արշ. Խաչատրյանի հիշողությունների մեջ սպրդել են սխալներ, որոնց մասին անհրաժեշտ եմ համարում տեղեկացնել Ձեզ մի երկու խոսքով։

Ձեր հրապարակած հիշողության մեջ ասված է. «Դաշնակների ուշադրության և հարձակման հիմնական օբյեկտը լինում է Ձեկայի (Արտակարգ հանձնաժողովի) շենքը, որը խիստ դիմադրություն է ցույց տալիս ու մի քանի անգամ ետ շպրտում դաշնակների հարձակումը՝ նրանց պատճառելով մեծ կորուստներ։ Այդ անհավասար մարտերում ընկնում են Էջմիածնի Արտակարգ հանձնաժողովի նախագահ, Մայիսյան ապստամբության ակտիվ մասնակից Նավասարդյանը»։

Այս հատվածում ամեն ինչ ճիշտ է ասված, բացի երկու մոմենտից։ Էջմիածնի Արտակարգ հանձնաժողովի նախագահ էր ո՛չ թե Նավասարդյանը, այլ Լևոն Նալբանդյանը։ Վերջինս ո՛չ թե սպանվել է վերը նկարագրված կռվի ժամանակ, այլ Նիկոլ Ենգիբարյանի և տողերիս գրողի հետ միասին՝ ճեղքել է դաշնակների շրջապատումը և դուրս եկել Էջմիածնից։ Ինչպես պատմում է ընկեր Ենգիբարյանը, Լևոն Նալբանդյանին դաշնակները ձերբակալել և գնդակահարել են Երևանում։ Այդ պատճառով էլ Լևոն Նալբանդյանի անունը չկա Ձեր տպագրած հոդվածի այն մասում, ուր թվարկված են Էջմիածնում գնդակահարված կոմունիստները։ Լևոն Նալբանդյանը, իրոր, ակտիվ կերպով մասնակցել էր Մայիսյան ապստամբությանը Սարիղամիշում և, իբրև կոմունիստ, 1920 թ. բանտարկվել էր դաշնակցականների բանտում։

Արշ. Խաչատրյանի հիշողություններում ասված է նաև, որ «Դաշնակ ավանտյուրիստները, համախմբվելով Արագածի լեռնալանջի սասունցի գաղթականների գյուղերում, Ս. Վրացյանի գլխավորությամբ, նախապատրաստել էին դինված ավանտյուրա և փետրվարի 17-ին հարձակվել Էջմիածնի վրա»։

Ճիշտ է, որ փետրվարյան բանդիտական արկածախնդրության հրահրողն ու կազմակերպիչը հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներն էին՝ Վրացյանը և ուրիշները։ Բայց ստացվում է այն տպավորությունը, թե Էջմիածնի վրա հարձակվող ավազակախմբի անմիջական խմբապետը եղել է Վրացյանը։

Սակայն Էջմիածնի վրա, փետրվարի 17-ի ցերեկվա ժամը 12-ին մոտ, հարձակում կատարեցին խմբապետ Կարո Սասունու բանդիտները։ Մեզ՝ թվով 14—15 մարդու, Էջմիածնի Արտակարգ հանձնաժողովի շենքում, հանկարծակի շրջապատեց նրա ոհմակը, ձիավորների բավական մեծ, բայց խառնիճաղանճ ամբոխով։ Մեզ հաջողվեց ոչ միայն հետ մղել նրանց հարձակումները մեր շենքի վրա, այլև դուրս գալ շենքից, դիրքեր բռնել Էջմիածնի հրապարակում (ներկայիս ռայկոմի և ռայգործկոմի շենքի դիմաց), մի շարք անգամներ ետ մղել նրանց հեծելազորային գրոհները տարբեր փողոցներից։

Այդ կռվի մի քանի մոմենտները ես նկարագրել եմ «Առաջին կոմունարը» վերնագիրը կրող իմ հուշերի մեջ, որը 1925 թ. լույս տեսավ «Աշխատանք» ամսագրում և առանձին բրոշյուրով։ Այնտեղ հիշատակված է նաև Լևոն Նալբանդյանի և Նիկոլ Ենգիբարյանի մասին։ Այդ օրը, իրոր, բավական կորուստներ ունեցավ Կարո Սասունու ավազակախումբը, կռվում մեր ընկերներից սպանվեց միմիայն մեկը, բայց ոչ Նավասարդյանը։ Ըստ երևույթին ընկ. Արշ. Խաչատրյանին թյուրիմացության մեջ է ձգել Նավասարդ Նավասարդյանի անունը, որ հիշատակված է Էջմիածնում գնդակահարված 15 ընկերների անվանացուցակում։

Քանի որ առիթ է ներկայացել (այդ մասին մամուլում, ինչքան հիշում եմ, չի գրված), կարծում եմ, արժե հիշատակել, որ փետրվարի 17-ին Էջմիածնում, դաշնակ ավազակախմբերի դեմ կռիվ էր տեղի ունենում ոչ միայն Արտակարգ հանձնաժողովի շենքի շուրջը, այլև Հռիփսիմեի վանքի մոտ։

Խնդիրն այն է, որ փետրվարի 17-ին դաշնակցական բանդաները առաջին հերթին ներ-

խուժել էին Փարաքար, կտրել էջմիածնի հեռախոսային կապը Երևանի հետ, և մերոնք սպասում էին, թե հարձակում կարող է լինել Փարաքարի կողմից, ուստի կոմունարների մի մասը համախմբված էր Հռիփսիմեի վանքի մոտ։

Այդ մասին, մենք, Արտակարգ հանձնաժողովի մոտ շրջապատվածներս, կարող էինք դատել միայն թնդանոթաձգությունից ու գնդացրային կրակից, որ տեղի էր ունենում Հռիփսիմեի վանքի կողմերում։ Այդտեղ էին գտնվում Դավկոմի (Կավառային կոմիտեի) քարտուղար ընկ. Կ. Այվազյանը, Դավգործկոմի նախագահ Ս. Լալայանը, քաղաքի կոմիսար Լապիշևսկին (ծագումով լեհ), Արել Շիրինյանը և շատ ուրիշները, կարմիրբանակային համապատասխան զորամասով, որի մեջ էր գտնվում, ինչպես պարզվեց վերջերս, նաև ներկայիս գեներալ մայոր, Սովետական Միության Հերոս Ասքանազ Կարապետյանը։ Չկարողանալով գիմադրել թվով գերազանց ուժերին և ունենալով փոխադրական միջոցներ, Հռիփսիմեի մոտ կվող ընկերները հետ են քաշվում դեպի Երևան, ճեղքելով Փարաքարում նրանց դիմադրող դաշնակցական բանդան։

Տեսնելով, որ Հռիփսիմեի շրջանում արդեն դադարեց հրաձգությունը, իսկ մեզ վրա տարբեր փողոցներից (Աշտարակի, բանտի փողոցից և այլն) գրոհող բանդաները դադարեցրին իրենց գրոհները և փողոցից փողոց անցնելով դիրքեր են բռնում վերևում նշածս հրապարակը դուրս եկող բոլոր փողոցների ծայրերին, խտացնում են իրենց օղակը մեզ անելանելի վիճակի մեջ ձգելու համար, ու արդեն մեր դեմ կրակ են տեղում էջմիածինը շրջապատող բարձր կավե պարիսպներից, Լևոն Նալբանդյանի գլխավորությամբ՝ մենք սկսեցինք հետ քաշվել դեպի Երևանի խճուղին՝ դրությունը պարզելու և Հռիփսիմեի շրջանում գտնվող մեր ընկերներին փրկելու համար։

Սակայն, հասնելով ճեմարանի շենքին, նկատեցինք, որ Երևանի խճուղուց դեպի մեզ է շարժվում մի բազմություն։ Այդ դաշնակցական բանդաներն էին, որ Հռիփսիմեի շրջանում մերոնց դիմադրությունը հնշելուց հետո գալիս էին դեպի մեր հրապարակը։ Այլևս դիմադրելն անհնարին էր և մեր վերջնական շրջապատումն անխուսափելի։ Մենք նետվեցինք ճեմարանի բակը, ցատկեցինք էջմիածնի կավաշեն պարիսպներից և դուրս եկանք դաշտ, որ պատած էր խոր ու դժվարանցանելի ձյունով։

— Մնում է՝ միայն դեպի Երևան,— ասաց Նալբանդյանը,— բայց ինչպե՞ս....

— Ես ճանապարհը գիտեմ,— ասաց Նիկոլ Ենգիբարյանը,— առանց Փարաքար մտնելու ձեզ դուրս կբերեմ Երևան։

Հաղթանդամ, խիզախ, արտակարգ ֆիզիկական ուժի տեր էր Նիկոլ Ենգիբարյանը, որ ցույց էր տվել վճռականություն նաև էջմիածնի հրապարակի մարտում։ Մենք գիտեինք Նիկոլին իր շիտակ ու ազնիվ բնավորությամբ։ Ենգիբարյանն աչքի էր ընկել որպես Արտակարգ հանձնաժողովի աշխատակից նաև դաշնակների ավանտյուրան սկսվելուց մի փոքր առաջ. դաշնակները երեք բանդիտների ուղարկել էին էջմիածին՝ Դավառային կոմիտեի քարտուղար Կ. Այվազյանին և մի քանի պատասխանատու աշխատողների տեռորի ենթարկելու համար։

Ընկեր Ենգիբարյանն այժմ ապրում է Երևանում։

Այս երկտողով ես ցանկանում եմ միայն պարզաբանել ընկ. Խաչատրյանի հիշողության մեջ փաստական կողմը և կատարել մի երկու լրացում։

Գ. ԱԲՈՎ

Խմբագրության կողմից. *Ընկ. Աբովի նամակը ճշտում է ընկ. Խաչատրյանի հոդվածում բերված տվյալները, ռևոլյուցիոն գործիչ՝ Լևոն Նալբանդյանի վերաբերյալ։*